ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 158 – Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 35-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել Հաշվեքննիչ պալատի ծառայողների վարձատրության կարգը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի դեկտեմբերի 11-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

/ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Recoverable Signature

X

ԿԱՐԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Signed by: ARUSTAMYAN KAREN 3814790103

Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի
դեկտեմբերի 26 -ի N 158 -Լ որոշման

ԿԱՐԳ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանող Հաշվեքննիչ պալատի ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները:

2. Հաշվեքննիչ պալատի ծառայողների տարեկան աշխատավարձի չափը սահմանելու հետ կապված գործառույթների իրականացումն ապահովում է Հաշվեքննիչ պալատի ֆինանսատնտեսական գործառույթների համար պատասխանատու ստորաբաժանումը:

3. Հաշվեքննիչ պալատի ծառայողների տարեկան աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով Հաշվեքննիչ պալատի համար նախատեսված աշխատավարձի տարեկան ֆոնդի հիման վրա՝ ըստ Հաշվեքննիչ պալատի ծառայողների պաշտոնների ենթախմբերի:

4. Հաշվեքննիչ պալատի ծառայողների աշխատավարձը սահմանվում է, հարկային մարմնում առկա տեղեկատվության հիման վրա, Հայաստանի Հանրապետությունում գործող՝ միջազգային խմբի անդամ հանդիսացող և միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ)՝ ըստ համադրելի պաշտոնների (Աղյուսակ) միջին վարձատրությանը համապատասխան:

5. Կազմակերպությունների վարձատրության վերաբերյալ տեղեկատվության հարցումը հարկային մարմին ներկայացվում է յուրաքանչյուր տարի՝ հունվարի երրորդ տասնօրյակում:

6. Կազմակերպությունների վարձատրության վերաբերյալ տեղեկատվության հարցման պատասխանն ստանալուց հետո՝ մեկ շաբաթյա ժամկետում, սույն կարգի 2-րդ կետում նշված պատասխանատու ստորաբաժանումը մշակում և Հաշվեքննիչ պալատի քննարկմանն է ներկայացնում Հաշվեքննիչ պալատի ծառայողների առաջիկա տարվա աշխատավարձի չափը հաստատելու մասին իրավական ակտի նախագիծը:

7. Հաշվեքննիչ պալատի ծառայողների աշխատավարձի չափը սահմանվում է սույն կարգի Աղյուսակով նախատեսված համադրելի պաշտոնների վարձատրության միջնաթվին համապատասխան:

8. Հաշվեքննիչ պալատի ծառայող՝ Հաշվեքննիչ պալատի անդամ, վարչության պետ և վարչության պետի տեղակալ պաշտոններին, կազմակերպություններում համադրելի պաշտոնների բացակայությամբ պայմանավորված, դրանց աշխատավարձը հաշվարկվում է Հաշվեքննիչ պալատի նախագահի և ավագ կառավարիչի

աշխատավարձի ցուցանիշների միջակայքում: Հաշվեքննիչ պալատի անդամի աշխատավարձը հաշվարկվում է Հաշվեքննիչ պալատի նախագահի ցուցանիշի 70%-ի չափով, վարչության պետի աշխատավարձը՝ Հաշվեքննիչ պալատի անդամի աշխատավարձի 65%-ի չափով և վարչության պետի տեղակալի աշխատավարձը՝ հավասարեցվում է ավագ կառավարչի պաշտոնի աշխատավարձին:

9. Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում չհանդիսացող՝ Հաշվեքննիչ պալատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում Հաշվեքննիչ պալատի ծառայողի պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը սահմանվում է սույն կարգի համաձայն՝ ըստ Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի № 133-Լ որոշմամբ սահմանված պաշտոնների համարժեքության:

Աղյուսակ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

	Հաշվեքննիչ պալատի ծառայողի պաշտոնը	**Աուդիտորական կազմակերպության պաշտոնը**
1.	Հաշվեքննիչ պալատի նախագահ	Գործընկեր, տնօրեն, աուդիտի այլ համարժեք ղեկավար
2.	Հաշվեքննության ավագ կառավարիչ	Ավագ մենեջեր
3.	Հաշվեքննության կառավարիչ	Մենեջեր, մենեջերի օգնական, կրտսեր մենեջեր
4.	Առաջին դասի ավագ հաշվեքննող	Ավագ աուդիտորների եռամակարդակ դասակարգման վերին մակարդակը կամ եռամակարդակ դասակարգման բացակայության դեպքում՝ ավագ աուդիտորի պաշտոնը
5.	Երկրորդ դասի ավագ հաշվեքննող	Ավագ աուդիտորների եռամակարդակ դասակարգման միջին մակարդակը
6.	Երրորդ դասի ավագ հաշվեքննող	Ավագ աուդիտորների (ավագ մասնագետ, աուդիտի բաժնի ավագ/առաջատար փորձագետ կամ այլ համարժեքներ) եռամակարդակ դասակարգման ստորին մակարդակը

7.	Առաջին դասի կրտսեր հաշվեքննող	Կրտսեր աուդիտորների եռամակարդակ դասակարգման վերին մակարդակը կամ եռամակարդակ դասակարգման բացակայության դեպքում՝ կրտսեր աուդիտորի (աուդիտորի օգնական, աուդիտի բաժնի մասնագետ կամ այլ համարժեքներ) պաշտոնը
8.	Երկրորդ դասի կրտսեր հաշվեքննող	Կրտսեր աուդիտորների (աուդիտորի օգնական, աուդիտի բաժնի մասնագետ կամ այլ համարժեքներ) եռամակարդակ դասակարգման միջին մակարդակը
9.	Երրորդ դասի կրտսեր հաշվեքննող	Կրտսեր աուդիտորների (աուդիտորի օգնական, աուդիտի բաժնի մասնագետ կամ այլ համարժեքներ) եռամակարդակ դասակարգման ստորին մակարդակը